

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հակոբյան Աննա Աշոտի

**ՊԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ.
ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2019

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Акобян Анна Ашотовна

**СУДЕБНЫЙ ПРЕЦЕДЕНТ КАК ИСТОЧНИК ПРАВА:
ИСТОРИКО-ТЕОРЕТИЧЕСКИЙ И ПРАВОВОЙ АНАЛИЗ**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01- «Теория и история государства и права, история государственных и правовых учений»

Ереван – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի նիստում Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Հ. Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վ. Վ. Ստեփանյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու **Ա. Ա. Կարապետյան**

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. մայիսի 8-ին՝ ժամը 14³⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2019թ. մարտի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանական գիտությունների թեկնածու

Տ. Հ. Սուլջան

Тема диссертации утверждена на заседании ученого совета Института философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Г. Г. Сафарян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **В. В. Степанян**

кандидат юридических наук **А. А. Карапетян**

Ведущая организация: Российско-Армянский университет

Защита состоится 8 мая 2019г. в 14³⁰ часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК РА при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 28 марта 2019г.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук

Т. О. Суджян

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Թեմայի հետազոտության արդիականությունը. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած մի շարք բարեփոխումները, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունները, վերաբերում են ազգային իրավական համակարգին և դատական իշխանությանը: Դրանցից են, օրինակ՝ դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող Բարձրագույն դատական խորհրդի ստեղծումը, ՀՀ Վճռաբեկ դատարանի լիազորությունների հստակեցումը, սահմանադրական փոփոխությունները, օրգանական, այսինքն՝ սահմանադրական օրենքների ընդունումը, նոր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, ՀՀ հարկային օրենսգրքի, Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի ընդունումը և այլն: Այս ամենը վկայում է մշտապես փոփոխվող հասարակական հարաբերությունների մասին, որոնք պահանջում են, որպեսզի դատական համակարգում զարգացման գործընթացները կրեն շարունակական բնույթ՝ դատարանների գործունեության բարելավման, արդյունավետության բարձրացման, արդարացիության ապահովման, կոռուպցիայի վերացման և մի շարք այլ հիմնախնդիրների լուծման նպատակով: Այս կապակցությամբ նախադեպի ինստիտուտը կարող է դրական ազդեցություն ունենալ նշված զարգացման գործընթացների վրա և նպաստել առաջացած հիմնախնդիրների լուծմանը: Նախադեպային իրավունքը նույնպես գտնվում է շարունակական զարգացման փուլում, մինչդեռ ազգային իրավական համակարգում նախադեպի ինստիտուտի կիրառելիության աստիճանն ընդգծում է նախադեպի հետ կապված տարբեր կարևոր հիմնահարցերի բացահայտման և կարգավորման, ինչպես նաև գիտական խորը հետազոտության կատարման անհրաժեշտությունը: Սույն գիտական հետազոտությունը լրացնում է արդեն իսկ կատարված ուսումնասիրությունների շարքը, նպատակ է հետապնդում առավել լիարժեքորեն բնութագրել դատական նախադեպը՝ որպես իրավունքի աղբյուր, հետազոտել դատական նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի տեղն ու դերը իրավակարգավորումների կառուցակարգում, ներկայացնել նախադեպի ինստիտուտի բովանդակությունը, վերլուծել դատական նախադեպի էությունը, նշանակությունը, կառուցվածքն ու հիմնական հատկանիշները, հիմնավորել դրա լայնորեն կիրառման անհրաժեշտությունն ազգային դատական համակարգում և բացահայտել կարևորագույն այլ հարցեր:

Վերոնշյալից ելնելով՝ նախադեպային ինստիտուտի վերաբերյալ թեմայի հետազոտության արդիականությունը ձեռք է բերում առանձնահատուկ գիտական և գործնական նշանակություն:

Սույն ատենախոսական աշխատանքում կատարված պատմաիրավական և տեսական հետազոտությունը միտված է էլ ավելի զարգացնելու Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության գործունեությունը, պարզաբանելու և կարևորելու բարձր ատյանների դատարանների դերակատարումը գործող իրավական համակարգում, ընդլայնելու դատական նախադեպի վերաբերյալ առկա պատկերացումները և կիրառման շրջանակները, ընդհանուր և մայրցամաքային իրավունքի երկրների առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքում ձևավորելու միաժամանակ նախադեպային իրավունքի և այլ իրավունքի աղբյուրների վրա հիմնված հավասարակշռված իրավական համակարգ, ներկայացնելու այնպիսի հիմնահարցերի լուծումներ, որոնց դեռևս անդրադարձ չի կատարվել իրավունքի տեսության գիտության մեջ, ինչպես նաև ներկայացնելու մի շարք առաջարկություններ, որոնք էապես կազդեն ՀՀ օրենսդրության կատարելագործման գործընթացի, իրավական բացերի լրացման և ազգային իրավական համակարգում այլ որակական փոփոխությունների վրա: Հետևապես սույն ատենախոսական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝ տեսական և գործնական առումներով:

Սույն թեմայի արդիականությունը բացատրվում է նաև աշխարհում իրավական գլոբալացման ընթացքներով, որոնք հանգեցնում են իրավական համակարգերի կոնվերգենցիայի, ինչը չի նշանակում մի իրավական համակարգի փոխարինումը մյուսով, սակայն առանց արտերկրյա (արտաքին) փորձի ուսումնասիրության՝ ազգային իրավական համակարգի զարգացումն անհնար է: Եվ Հայաստանի Հանրապետությունը՝ անդամակցելով միջազգային տարբեր կառույցների և փորձելով ակտիվ արտաքին տնտեսական կապեր հաստատել այլ պետությունների հետ, նույնպես խնդիր ունի ձևավորելու զարգացող հասարակական հարաբերություններին համահունչ օրենսդրական և իրավակիրառական պրակտիկա: Այսպիսով. տվյալ թեմայի վերլուծության արդիականությունը լիովին ակնհայտ է:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը. Դատական իշխանության և նախադեպի ինստիտուտի հետ կապված հիմնահարցերը մշտապես գտնվում են հայրենական և արտասահմանյան գիտնականների ուշադրության կենտրոնում: Ազգային իրավագիտության մեջ կատարվել են մի շարք հետազոտություններ՝ նվիրված դատական նախադեպին՝ որպես իրավունքի աղբյուր: Վերոնշյալ հիմնախնդիրների ուսումնասիրությունների շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում հատկապես Լ. Գ. Դավլաթյանի, Ա. Ֆ. Կակոյանի, Խ. Կ. Ղազարյանի, Վ. Կ. Ղազարյանի, Ա. Ս. Ղամբար-

յանի, Ա. Մ. Միրզոյանի, Ա. Յու. Մկրտումյանի, Ք. Հ. Սարգսյանի, Վ. Ա. Օհանյանի և այլոց աշխատությունները¹:

Արդի ժամանակաշրջանում նախադեպային իրավունքի երևույթին նվիրված է նաև ընդարձակ արտերկրյա գիտական գրականություն: Ռուսական իրավագիտության մեջ դատական նախադեպի հետ կապված հիմնահարցերն առավել լիարժեքորեն են ուսումնասիրված Տ.Վ. Ապարովայի, Ի.Յու. Բոգդանովսկայայի, Ս. Յու. Բոդրովի, Մ.Մ. Վիլյամովայի, Տ.Վ. Վլասովայի, Պ.Ա. Գուկի, Վ.Վ. Կոշելևայի, Ա.Պ. Չերեդնիչենկոյի և այլոց աշխատություններում²: Արևմտյան իրավագիտությունում խնդրո առարկա-

¹ Տե՛ս, Դալլաքյան Լ.Գ., ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական կարգավիճակի հիմնախնդիրները (պատմաիրավական և տեսագործական վերլուծություն), Երևան, 2015, Կակոյան Ա.Ֆ., Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր Հայաստանի Հանրապետության և այլ երկրների իրավական համակարգերում (իրավահամեմատական վերլուծություն), Երևան, 2008, Ղազարյան Ի.Կ., Իրավունքի ռեալիստական հայեցակարգը և դատական իրավաստեղծ գործունեության հիմնահարցերը (տեսական-իրավական վերլուծություն), Երևան, 2014, Ղազարյան Վ.Կ., Դատական նախադեպի էությունը և դերը նորմատիվ կարգավորման համակարգում, Երևան, 2011, Ղամբարյան Ա.Ս., Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (համատեսական և մեթոդաբանական հիմնախնդիրներ), Երևան, 2012, Միրզոյան Ա.Մ., Դատական իրավաստեղծ գործունեության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տեսական և կիրառական վերլուծություն), Երևան, 2015, Мкртумян А.Ю., Судебный прецедент в гражданском праве России и Армении. М., 2011, Սարգսյան Ք.Հ., Դատական նախադեպը հետխորհրդային պետությունների իրավական համակարգերում (տեսական և գործնական հիմնախնդիրներ), Երևան, 2013, Օհանյան Վ.Ա., Իրավունքի աղբյուրների հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում (տեսագործական վերլուծություն), Երևան, 2009:

² Տե՛ս, Апарова Т.В. Прецедент в английском праве (историко-юридическое исследование). М., 1968, Богдановская И.Ю. Статут в английском праве. М., 1993, Богдановская И.Ю. Источники права на современном этапе развития “общего права”. М., 2007, Вильданова М.М. Источники права Франции. М., 1987, Власова Т.В. Прецедентное право Англии: теоретико-сравнительный анализ. М., 2002, Гук П.А. Судебный прецедент как источник права. Саратов, 2002, Гурова Т.В. Актуальные проблемы теории источников права. Самара, 2000, Загайнова С.К. Судебный прецедент: историко-правовой аспект. Екатеринбург, 1999, Изварина А.Ф. Акты судов общей юрисдикции. М., 1999, Карташов В.Н. Юридическая деятельность: проблемы теории и методологии. М., 1990, Кошелева В.В. Акты судебного толкования правовых норм. Вопросы теории и практики. Саратов, 1999, Никифорова М.А. Судебный прецедент в конституционном праве США. М., 1980, Придворова М.Н. Судебная практика в правовой системе Российской Федерации. Тамбов, 2003, Терёхин В.А. Судебная власть в государственно-правовом механизме обеспечения прав и свобод граждан (вопросы теории и практики). Саратов, 2001, Фахрушви Т.И. Судебная система РФ: современное состояние и некоторые

յի վերաբերյալ իրենց նշանակալի ներդրումն ունեն Ջ. Հարրիսը, Ա. Ուոթսոնը, Ա. Աշուրֆը, Ա. Հոգյուն, Ռ. Քրոսսը, Ս. Քոհենը, Գ. Ուիլիամսը, Ջ. Էվանսը և այլք³:

Հավուր պատշաճի գնահատելով վերոնշյալ հեղինակների կատարած աշխատությունները, այդուհանդերձ, անհրաժեշտ է ընդգծել, որ սույն ատենախոսական աշխատանքն առաջիններից մեկն է, իսկ իր բովանդակային որոշ առումներով նաև առաջինը հայրենական իրավագիտության մեջ, որում հանգամանալից, լիարժեք, ամբողջական և խորը հետազոտության է ենթարկվել նախադեպի ինստիտուտի և նախադեպային իրավունքի առաջացումը Հին Հռոմում և ընդհանուր իրավունքի երկրներում, մասնավորապես՝ Անգլիայում, պատմական տեսանկյունից վերլուծվել է դատական նախադեպի զարգացման ընթացքը, բացահայտվել է դատական նախադեպի էությունը, բնույթը, բովանդակությունը և կառուցվածքային տարրերը, մեկնաբանման եղանակները, պարզաբանվել է ազգային իրավական համակարգում, ինչպես նաև իրավակարգավորումների ոլորտում դատական նախադեպի աստիճանաբար բարձրացող դերը և տեղը, կիրառման առանձնահատկություններն ու մի շարք այնպիսի կարևորագույն հարցեր, որոնց դեռևս չեն անդրադարձել այլ հեղինակները: Դրանցից են, մասնավորապես, մի քանի նույնանման կամ հակասական նախադեպային որոշումների առկայության դեպքում կիրառման ենթակա որոշման ընտրության, դատական նախադեպի հետադարձ ուժի, ուժը կորցնելու, ՀՀ Վճռաբեկ դատարանի երկու հիմնական գործառույթների պարզաբանման հիմնահարցերը և այլն:

Աշխատանքի յուրահատկությունը կայանում է նաև նրանում, որ Հայաստանի Հանրապետությունում փոփոխվող օրենսդրական նորմերի և դրանց կիրառման համատեքստում դատական նախադեպի հետ կապված հիմնախնդիրները շարունակում են ունենալ սոցիալ-իրավական նշանակություն: Այս առումով հարկ է ընդգծել, որ ՀՀ փոփոխված Սահմանադրության (2015թ.), նոր ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի (2018թ.) և նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի (2018թ.) ընդունումից, ինչպես նաև մնացած օրենսգրքերում կատարված որակա-

направления совершенствования. Тверь, 1998, Чепурнова Н.М. Судебная власть в Российской Федерации: проблемы теории и государственно-правовой практики. Саратов, 1999, Чередниченко С.П. Судебное правотворчество: сравнительно-правовое исследование. М. 2005, Бодров С.Ю. Судебный прецедент в системе источников российского права: вопросы теории и практики, Ульяновск, 2004.

³ Տե՛ս, սույն աշխատանքի գրականության ցանկը:

կան փոփոխություններից հետո Հայաստանի Հանրապետությունում դատական նախադեպի ինստիտուտը չի ուսումնասիրվել պատշաճ կերպով: Բացի այդ, նույնիսկ իրավակիրառ պրակտիկայում առաջացել են բազում բարդ և վիճահարույց հիմնահարցեր կապված դատական նախադեպի ճիշտ կիրառման, հիմնավորման և հարակից հարցերի հետ: Նշված բոլոր հիմնահարցերը մանրակրկիտ հետազոտվել են սույն ատենախոսական աշխատանքում:

Հետազոտության օբյեկտը դատական նախադեպն է՝ որպես իրավունքի աղբյուր: **Հետազոտության առարկան** է դատական նախադեպի առաջացումը, ժամանակի ընթացքում վերջինիս կատարելագործումը, դրա էությունը, բովանդակությունը, առանձնահատկությունները և գործառույթները, կիրառման շրջանակները տարբեր իրավական համակարգերում, ինչպես նաև դատական նախադեպի հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները. Սույն ատենախոսական աշխատանքի հիմնական նպատակը դատական նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի պատմատեսական զարգացման վերլուծությունն է և արդի ժամանակաշրջանում դատական նախադեպի հետ կապված և չպարզաբանված տեսական ու գործնական հիմնահարցերի խորը հետազոտությունը և դրանց լուծման եղանակների սահմանումը: Վերոնշյալ նպատակներին հետամուտ՝ անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

-ուսումնասիրել դատական նախադեպի առաջացման նախադրյալները,

-հետազոտել նախադեպի ինստիտուտի պատմական էվոլյուցիան, որի հետևանքով ընդգծել այն հանգամանքը, որ դատական նախադեպը տարբեր ժամանակաշրջաններում դիտարկվել է որպես խիստ անհրաժեշտ երևույթ և իրավական կարգավորման միասնականության և այլ կարևորագույն հարցերը լուծելու շնորհիվ առ այսօր պահպանում է իր արդիականությունը,

-բացահայտել դրա էությունը, հասկացությունը և հիմնական հատկանիշները,

-ուսումնասիրել այն իրավական համակարգերը, որոնք ներկա ժամանակաշրջանում գլխավորապես հիմնված են նախադեպային իրավունքի վրա,

-վերլուծել դատական նախադեպի դրական և հարաբերականորեն թեր կողմերը, կիրառման անհրաժեշտությունն ու հիմքերը, ինչի հետևանք

քով արժևորել դատական նախադեպի դերն ու նշանակությունն իրավակարգավորումների կառուցակարգում,

-հարստացնել Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում նախադեպային իրավունքի մասին գիտական պատկերացումները՝ պարզաբանելով նաև դատական նախադեպի չուսումնասիրված առումները և տեսականորեն վերլուծելով դրա հետ կապված հիմնախնդիրները,

-ներկայացնել դատական նախադեպի վերաբերյալ գիտականորեն հիմնավորված առաջարկություններ, որոնք կնպաստեն ներպետական օրենսդրության կատարելագործմանը և կբարձրացնեն դատական նախադեպերի կիրառման արդյունավետությունը Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները և տեսական հիմքը. Որպես դատական նախադեպի՝ իբրև տեսաիրավական կատեգորիայի հետազոտման մեթոդաբանական հիմք օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդները: Ընդհանուր գիտական մեթոդ է հանդիսացել համընդհանուր դիալեկտիկական մեթոդը, այսինքն՝ դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները: Հետազոտության ընթացքում օգտագործվել են նաև պատմական, տրամաբանական, համեմատական, համակարգային-կառուցվածքային, ձևական-իրավաբանական, համակարգային վերլուծության մեթոդները, ինչպես նաև իրավունքի սոցիոլոգիայի, իրավունքի փիլիսոփայության, քաղաքակրթական մոտեցումները: Հետազոտության համար որպես **տեսական բազա**

ծառայել են դատական նախադեպի վերաբերյալ տարբեր գիտական աշխատությունները, ինչպես նաև պետության և իրավունքի տեսության գիտության արդյունքները, որոնք աղերսվել են քննարկվող թեմայի հետ: Մասնավորապես, ատենախոսության համար տեսական հենք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան գիտնականների՝ Վ. Ս. Ներսեսյանցի, Ա. Լ. Ասատրյանի, Ա. Ս. Ղամբարյանի, Գ. Գ. Հարությունյանի, Գ. Հ. Սաֆարյանի, Ս. Ս. Ալեքսեևի, Ի. Յու. Բոգդանովսկայայի, Լ. Ն. Սմիրնովի, Մ. Ս. Ստրոգովիչի, Ռ. Զ. Լիվշիցի, Վ. Ս. Շեվցովի, Ն. Ե. Կրիլովայի, Գ. Ա. Ադիգեզալովայի, Ռ. Ա. Գուռանովի, Յու. Ա. Դմիտրիևի, Վ. Մ. Լեբեդևի, Պ. Ա. Գուկի, Ա. Ն. Գոլովիստիկովայի, Ռ. Դավիդի, Վ. Վ. Դժուրայի, Մ. Վ. Զախարովայի, Մ. Ն. Մարչենկոյի, Ն. Ա. Պողոսկայայի, Գ. Ֆ. Շերշենևիչի, Մ. Խրիպունովի, Տ. Վ. Շեպելի, Է. Ա. Սուխանովի, Մ. Ա. Ստեպանովի, Դ. Ա. Պաշենցևի, Ի. Բ. Նովիցկիի, Ա. Ն. Վերեշագինի, Ա. Ա. Կուրբատովի, Վ. Ա. Տոմսինովի, Վ. Վ. Ռավկոյի, Ա. Կ. Ռոմանովի, Վ. Վ.

Սողոկինի, Վ. Ն. Խրոպանյուկի, Ա. Ուոթսոնի, Ա. Աշուրֆի, Ա. Ռ. Հոգյուի, Ջ. Վ. Հարրիսի, Ա. Ռ. Քրոսսի, Հ. Լ. Ա. Հարթի, Դ. Ջ. Բեդերմանի, Ֆ. Ա. Քոհենի, Գ. Սլեփփերի, Գ. Ուիլյամսի, Կ. Ժոֆրե-Սպինոզի, Ջ. Էվանսի, Լ. Բ. Դիքսոնի, Դ. Լլոյդի, Հ. Վ. Ջոնսի, Ս. Ուրբինայի, Ք. Ա. Ֆրիերսոնի, Հ. Մաթթյուի, Ռ. Դուրքինի, Ջ. Պ. Քեմբրի, Օ. Էդելմանի, Դ. Մայերսի, Վ. Թուրնինգի և այլոց աշխատությունները:

Հետազոտության փորձարարական (էմպիրիկ) և նորմատիվ հիմքն են՝ ՀՀ Սահմանադրությունը (2015թ. փոփոխություններով), ՀՀ դատական օրենսգրքը սահմանադրական օրենքը (2018թ.), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը (2018թ.), ՀՀ օրենքները, ՀՀ նախագահի հրամանագրերը, ՀՀ կառավարության որոշումները, միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերը, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի նյութերը:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ դատական նախադեպն ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած սահմանադրական և օրենսդրական փոփոխությունների համատեքստում: Նշված փոփոխություններից հետո դատական նախադեպը դիտարկվել է նոր պայմաններում, բացահայտվել է վերջինիս էությունը, տեղը և դերը ներպետական իրավական համակարգում, ինչպես նաև պարզաբանվել է դատական նախադեպի կայացման հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում:

Բացի վերոնշյալից, առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունում կատարվել է հին հռոմեական իրավական համակարգում նախադեպային բնույթ ունեցող պրետորական իրավունքի և Անգլիայի իրավական համակարգում դատական նախադեպի ժամանակակից դոկտրինի ձևավորման և զարգացման աննախադեպ գիտական խորությամբ և մանրակրկիտ պատմաիրավական հետազոտություն: Միաժամանակ, սույն առենախոսական աշխատանքում ամբողջությամբ բացահայտվել են նախադեպային իրավունքի տեսական և կիրառական ասպեկտները: Այս ամենի արդյունքում իրավահամեմատական վերլուծության է ենթարկվել նախադեպային իրավունքը արդի ժամանակաշրջանի իրավական ընտանիքների տարբեր երկրներում: Հետազոտության գիտական նորույթը դրսևորվում է նաև աշխատանքում կատարված վերլուծությունների հիման վրա ձևավորված եզրակացությունների և առաջարկությունների մեջ: Հետազոտության գիտական նորույթի տարրեր են պարունակվում նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են՝

1. Այն դեպքում, եթե գոյություն ունեն երկու կամ ավելի նախադեպային որոշումներ միևնույն առարկայի վերաբերյալ, որոնք էականորեն չեն տարբերվում մեկը մյուսից, ապա բոլորն էլ համարվում են կիրառման ենթակա, սակայն նախապատվությունը պետք է տրվի այն նախադեպային որոշմանը, որը, բովանդակային առումով, առավել հիմնավորված է, տրամաբանորեն փաստարկված և գործի հանգամանքների բերումով առավել պատճառաբանված:

2. Այն պարագայում, եթե գոյություն ունեն երկու (կամ ավելի) նախադեպային որոշումներ միևնույն առարկայի վերաբերյալ, որոնք հակասում են մեկը մյուսին, ապա երկուսն էլ (բոլորը) համարվում են կիրառման ենթակա նախադեպեր, սակայն դատարանը դրանցից մեկի ընտրության (կիրառման) հարցը որոշելիս պետք է, նախևառաջ, ուսումնասիրի այդ որոշումների բովանդակությունը, մասնավորապես՝ նախադեպերում սահմանված պատճառաբանությունները, վերլուծությունները և եզրահանգումները, այսինքն՝ որոշումների պարտադիր մասերը (ratio decidendi-ները):

Միայն ratio decidendi-ների հայտնաբերման, ուսումնասիրության և քննվող գործի հետ համեմատության արդյունքում դատարանը պետք է որոշում կայացնի դրանցից մեկի կիրառման վերաբերյալ, սակայն որոշման մեջ, որպես հավելյալ ասված (obiter dictum), պետք է նաև ներկայացնի մյուս նախադեպային որոշումները չկիրառելու իր պատճառաբանությունները:

3. Դատական նախադեպը ձևավորվում է մեկ որոշմամբ, ինչը պայմանավորված է նրանով, որ դատական որոշումը ձեռք է բերում նախադեպի կարգավիճակ այն պահից սկսած, երբ տվյալ որոշումը մտնում է օրինական ուժի մեջ, այսինքն՝ որոշման օրինական ուժի մեջ մտնելը այն պահին է, երբ որոշումը դառնում է նախադեպ: Թեև իրավունքի տեսության մեջ ընդունված է, որ նախադեպը, որպես կանոն, ձևավորվում է մի քանի որոշումների հետևանքով, այնուամենայնիվ, հարկ է փաստել, որ որոշման մեջ ներկայացված իրավական դիրքորոշումը կամ դրույթը դառնում է կիրառման ենթակա հենց որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահից սկսած, հետևաբար՝ օրինական ուժի մեջ մտնելու պահին անմիջականորեն կապված է որոշման՝ նախադեպային բնույթ ձեռք բերելու հետ:

4. Դատական նախադեպը երբեք չի կարող կորցնել իր ուժը, այլ կարող է պարզապես դադարել կիրառվել դատական պրակտիկայում, այն պատճառաբանությամբ, որ հանդիսանում է դատական որոշում, որով լուծվել է կոնկրետ անձանց միջև ծագած իրավական վեճը, և այն շարունակում

է ունենալ իրավական ուժ և պարտադիր լինել գործով կողմերի համար: Նույնիսկ այն դեպքում, երբ նախադեպային որոշում կայացրած դատարանը գտնում է, որ այդ նախադեպային որոշման մեջ ներկայացրած իր իրավական դիրքորոշումը եղել է սխալ և նոր նախադեպային որոշմամբ փոփոխում է այն, ապա երկու որոշումներն էլ շարունակում են համարվել նախադեպային, սակայն կիրառման նպատակով դրանցից որևէ մեկի ընտրության հարցը հետագայում որոշում է դատարանը՝ նմանատիպ այլ գործ քննելիս: Այսինքն՝ դատական նախադեպը կարող է դադարել կիրառվել դատական պրակտիկայում՝ նոր նախադեպային որոշմամբ ավելի հիմնավոր լուծում ստանալու արդյունքում, քանի որ դատարանի կողմից նախադեպային որոշման կիրառման ժամանակ նախապատվությունը կտրվի գործի ավելի հիմնավոր և պատճառաբանված որոշմանը: Սակայն, ցանկացած պարագայում կիրառման նպատակով նախադեպային որոշման ընտրության հարցը որոշում է դատարանը՝ գործը քննելիս: Այնպիսի իրավական համակարգում, որտեղ դատական նախադեպը կատարում է, նախևառաջ, մեկնաբանող գործառույթ, նախադեպային որոշումը կարող է դադարել կիրառվել համապատասխան օրենքի փոփոխության կամ նոր օրենքի ընդունման հետևանքով՝ հնի դադարեցման ժամանակ: Այնուամենայնիվ, դրա մեջ ներկայացված դիրքորոշումը, մեկնաբանությունները և եզրահանգումները շարունակում են որոշակի արժեք ունենալ նույնանման փաստական հանգամանքներով այլ գործի համար:

5. Դատական նախադեպը չպետք է ունենա հետադարձ ուժ, քանի որ այն հանդիսանում է արդարադատության արդյունք, որտեղ, նախևառաջ, պետք է հաշվի առնվեն տվյալ գործով կողմերի շահերը: Ցանկացած դատական նախադեպ ենթակա է կիրառման իր օրինական ուժի մեջ մտնելու պահից հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական նախադեպը վերացնում է արարքի պատժելիությունը կամ մեղմացնում է պատիժը կամ բարելավում է անձի իրավական վիճակը: Կոնկրետ գործով նախադեպային որոշում կայացնող դատարանը կարող է հանգել այն եզրակացության, որ նախկինում կայացված նախադեպային որոշումը, համապատասխանաբար նաև դրա մեջ բովանդակվող իրավական դիրքորոշումը, ենթակա է փոփոխման, սակայն այս իրավիճակում գործի լուծումը պետք է տրվի նախկին նախադեպին համապատասխան: Այսինքն, յուրաքանչյուր անգամ նախադեպային որոշում կայացնելիս դատարանն առնչվում է քննվող գործով կողմերի միջև ծագած վեճի հետ, և դատարանի առաջնահերթ նպատակը վեճի լուծումն

է՝ արդարադատություն իրականացնելու միջոցով, որպիսի պարագայում դատարանը պետք է հաշվի առնի տվյալ գործով կողմերի շահերը և մատնանշի որոշման մեջ, որ նոր իրավական դիրքորոշման դրույթները կարող են վերաբերել միայն որոշման ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերություններին: Այս պարագայում ստացվում է, որ դատարանը կայացնում է որոշում նախկին նախադեպին համապատասխան, իսկ այնուհետև, միևնույն որոշման մեջ, ներկայացնում է դրան հակառակ իրավական դիրքորոշում:

6. Դատական նախադեպը՝ որպես իրավունքի աղբյուր, հանդիսանում է տարբեր իրավական ընտանիքների ինտեգրման եղանակ: Ներկայումս մայրցամաքային իրավական ընտանիքի երկրներում, որտեղ իրավունքի հիմնական աղբյուրը նորմատիվ իրավական ակտն է, ուժեղանում է դատական նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի նշանակությունը, դերը և կիրառումը, իսկ ընդհանուր իրավունքի երկրներում, որտեղ իրավունքի հիմնական աղբյուրը դատական նախադեպն է, ուժեղանում է նորմատիվ իրավական ակտերի՝ օրենքների, ստատուտների դերը և կիրառումը, հետևաբար, նման պայմաններում, կարելի է եզրահանգել, որ հետագայում անխուսափելի է այնպիսի իրավիճակի առաջացումը, երբ այդ երկու՝ ընդհանուր և մայրցամաքային իրավական ընտանիքների երկրներին բնորոշ իրավունքի աղբյուրները լիովին կնույնացվեն:

7. Նկատի ունենալով, որ ներկայումս ՀՀ Վճռաբեկ դատարանն իրականացնում է երկու հիմնական գործառույթ, մասնավորապես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանն իրավասու է դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և վերացնել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները, հետևաբար՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառություն իրականացնելու գործառույթի արդյունավետության ապահովման նպատակով առաջանում է այդ նախադեպային նշանակություն ունեցող որոշումների՝ որպես այդպիսիք գնահատելու և նշագրելու անհրաժեշտություն: Միաժամանակ, նշված որոշումները գործնականում միմյանցից տարանջատելու, դատական պրակտիկայում դրանց որոնումը և կիրառումը հեշտացնելու նպատակով կարող է օգտակար լինել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովող որոշումների տիտղոսաթերթի վրա աջ կողմի վերևի հատվածում ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից հատուկ նշում կատարելը՝ «Ն» (նախադեպ) տառով:

8. Հայաստանի Հանրապետությունում միասնական դատական պրակտիկա ձևավորելու և օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով հարկ է որպես նախադեպային դիտարկել ոչ միայն ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի, այլ նաև ՀՀ վերաքննիչ դատարանների օրինական ուժի մեջ մտած որոշումները՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ներպետական իրավական համակարգում գործում են մեկնաբանող դատական նախադեպերը, այսինքն՝ դատական որոշման միջոցով կատարվում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի դատական մեկնաբանություն, և ՀՀ վերաքննիչ դատարանների դատավորները, ինչպես ՀՀ Վճռաբեկ և ՀՀ Սահմանադրական դատարանների դատավորները, օժտված են, որպես կանոն, բարձր հեղինակությամբ, պրոֆեսիոնալիզմով, երկարատև մասնագիտական փորձով և արդարադատություն իրականացնելիս փաստացիորեն կատարում են օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանություններ և տալիս են պարզաբանումներ:

9. Ներկայումս ՀՀ Վճռաբեկ դատարանը իր նախադեպային որոշումների միջոցով փաստացիորեն կատարում է օրենսդրության դատական մեկնաբանություն, իսկ ավելի ցածր աստիճանի դատարաններն աչքի են ընկնում իրենց գերծանրաբեռնվածությամբ, ինչն էլ նշանակում է՝ գործերի բազմազանությամբ և տարբեր իրավանորմերի կիրառմամբ: Նշվածից ելնելով՝ կարող է նպատակահարմար լինել այնպիսի ընթացակարգի ստեղծումը, որով կնախատեսվի ստորադաս դատարանների կողմից գործի վարույթը կասեցնելու (հիմք) և ՀՀ Վճռաբեկ դատարան դիմելու իրավունք՝ գործի լուծման համար անհրաժեշտ իրավանորմի մեկնաբանություն կատարելու նպատակով:

10. Հաշվի առնելով այն գործոնները, որ դատական գործերի քննությունը հաճախ շատ երկարատև է, իսկ նախադեպային իրավունքը վեճերի լուծումը (գործի ելքը) դարձնում է կանխատեսելի, հետևաբար՝ կարող է նպատակահարմար լինել վեճերի լուծման արագացված՝ նախադեպային կարգի ստեղծումը, որի հիմքը կկազմի դատավարության կողմերի՝ դատական նախադեպեր վկայակոչելու փաստը: Այս պարագայում կարելի է օրենսդրորեն սահմանել այնպիսի իրավական դրույթ, որի հիման վրա դատարանը ձեռք կբերի արագացված դատաքննություն կիրառելու իրավունք, եթե գործին մասնակցող անձինք վկայակոչել են նույնանման փաստական հանգամանքներով դատական նախադեպ (նախադեպեր) և դիմել դատարանին՝ այդ հիմքով արագացված դատաքննություն կիրառելու վերաբերյալ:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը. Հայաստանի Հանրապետությունում իրականացված սահմանադրական և դատաիրավական բարեփոխումները որոշակիորեն առնչվում են նաև նախադեպային իրավունքին, սակայն իրավունքի տեսության կողմից դրանք չեն ենթարկվել խորքային տեսական վերլուծության: Սույն ատենախոսության մեջ ձևակերպված տեսական դրույթները և եզրահանգումները թույլ են տալիս բացահայտել և լուծել մի շարք հիմնախնդիրներ, որոնք որոշակիորեն կնպաստեն պետության և իրավունքի ընդհանուր տեսության, իրավունքի պատմության և իրավագիտության առանձին բաժինների զարգացմանը: Այս տեսանկյունից ատենախոսության **տեսական** նշանակությունն այն է, որ գիտական հետազոտության առարկա է դարձել դատական նախադեպը, դրա կիրառման իրավական հիմքերը, միևնույն ժամանակ բացահայտվել են օրենսդրական համակարգում և դատական պրակտիկայում խնդրո առարկայի վերաբերյալ եղած հակասություններն ու բացերը, դրանք շտկելու համար մշակվել են մի շարք առաջարկություններ, որոնք ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական-կիրառական նշանակություն: Ատենախոսության **գործնական** նշանակությունը պայմանավորված է նրանով, որ դրա արդյունքները կարող են կիրառվել գիտահետազոտական գործունեության ընթացքում, իրավաստեղծ և իրավակիրառական բնագավառներում, դատական պրակտիկայում, ինչպես նաև պետության և իրավունքի տեսության և պատմության և իրավագիտության որոշ ճյուղերի դասընթացների, դասախոսությունների, սեմինարների և իրավակիրառ մարմինների համապատասխան վերապատրաստման դասընթացների ժամանակ: Բացի դրանից, աշխատանքը կարող է օգտակար լինել իրավաբանական և դատական գործունեության վերաբերյալ հետազոտումնասիրություններ կատարողների և պրակտիկ աշխատողների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. Ատենախոսական աշխատանքը նախապատրաստվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ իրականացվել են դրա քննարկումն ու գրախոսությունը: Թեկնածուական ատենախոսական աշխատանքի առավել կարևոր դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը. Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են վեց ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Աշխատանքի ներածական մասում հեղինակը հիմնավորում է հետազոտության թեմայի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացնում է աշխատանքի գիտական նորոյթը, պաշտպանության հիմնական դրույթները, տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ «**Դատական նախադեպի պատմական զարգացման հիմնական փուլերը**» վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Աշխատանքի առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «**Նախադեպի առաջացումը և զարգացումը հին հռոմեական իրավական համակարգում**» վերնագրով, հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել հին հռոմեական իրավունքի համակարգը և աղբյուրները, բացահայտել է պրետորայի կառուցվածքը, դատական գործունեության դատավարական կարգը, պրետորական իրավունքի՝ որպես հնագույն նախադեպային իրավունքի բովանդակությունը, բնույթն ու էությունը, բնորոշ հատկանիշները, պրետորների կողմից արձակվող ակտերի՝ էդիկտների նշանակությունը և կառուցվածքը, պրետորի դատավարական արտոնությունները և այլ հիմնահարցեր, պարզաբանել է, որ պրետորական իրավունքը, որպես հռոմեական իրավունքի ենթահամակարգ, ձևավորվել է պրետորների դատական գործունեության արդյունքում:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «**Դատական նախադեպի ժամանակակից դոկտրինի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները Անգլիայում**» վերնագրով, հեղինակը հետազոտության առարկա է դարձրել Անգլիայի իրավական համակարգում նախադեպային իրավունքի զարգացման ընթացքը, որը տեղի է ունեցել մի քանի փուլերով, Անգլիայի դատական իշխանության կառուցվածքը, որտեղ հատուկ անդրադարձել է Լորդերի պալատին (ներկայումս գործող Գերագույն դատարանին) և վերջինիս կարևորագույն որոշումներին: Միաժամանակ հեղինակը վերլուծել է Անգլիայի նախադեպի դոկտրինի նախնական հայտարարությունը և դատական որոշման դեկլարատիվ (հայտարարագրող) տեսությունը, ինչի արդյունքում պարզաբանել է Անգլիայում նախադեպի դոկտրինի պարտադիրության սկզբունքի էությունը և նպատակը:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «**Նախադեպային իրավունքի էությունը և բնութագրական հատկանիշները**» վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Աշխատանքի երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «**Դատական նա-**

խադեպի հասկացությունը, հատկանիշները և տեսակները» վերնագրով, հեղինակն ուսումնասիրել է դատական նախադեպի տեսական ասպեկտները, մասնավորապես՝ նախադեպի հասկացությունը, էությունը և բնութագրական հատկանիշները տարբեր իրավական համակարգերում, դատական նախադեպի տեղը, դերը և առանձնահատկությունները իրավունքի աղբյուրների շարքում, ինչպես նաև դատական որոշման պարտադիր մասը բացահայտելու հանրահայտ մեթոդները և դատական նախադեպերի դասակարգման եղանակները արդի ժամանակաշրջանում:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «**Դատական նախադեպի բովանդակային առանձնահատկությունները ընդհանուր իրավունքի համակարգում**» վերնագրով, հեղինակը ներկայացրել է ընդհանուր իրավունքի երկրներում դատական իրավաստեղծ գործունեության առանձնահատկությունները, դատական որոշումների կառուցվածքը և բնութագրական հատկանիշները, տարբեր դատական ատյաններում կայացրած որոշումների ratio decidendi-ի և obiter dictum-ի իրավաբանական ուժը, stare decisis սկզբունքը և այդ սկզբունքի բացառությունները, նախադեպային որոշումները per incuriam կամ այլ հիմքով չկիրառելու հնարավորությունները և կարևորագույն այլ հարցեր:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ «**Դատական նախադեպը Հայաստանի Հանրապետությունում**» վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Աշխատանքի երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «**Նախադեպի ինստիտուտը Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգում**» վերնագրով, հեղինակը պարզաբանել է դատական նախադեպի բնույթը և էությունը Հայաստանի ազգային իրավական համակարգում, ուսումնասիրել է բարձրագույն դատական ատյանների որոշումների դերը նախադեպային իրավունքի ձևավորման գործընթացում, Հայաստանի Հանրապետությունում շարունակական դատաիրավական բարեփոխումները, օրենսդրական փոփոխությունները և արդարադատության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը՝ նախադեպի ինստիտուտի տեսանկյունից, ինչպես նաև վերլուծել է նախադեպի արդիականությունը և կիրառման անհրաժեշտությունը, նախադեպային իրավունքի զարգացման ուղիները, դատական պրակտիկայի և դատական նախադեպի, նախադատելիության և նախադեպի հասկացությունների տարբերությունները և այլն:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «**Դատական նախադեպի կիրառման առանձնահատկությունները**» վերնագրով, հեղինակ-

կը հատուկ առանձնացրել է դատական նախադեպը՝ որպես իրավունքի աղբյուր, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում և անդրադարձել է Հայաստանի Հանրապետության դատական իշխանության մարմինների կողմից դատական նախադեպի կիրառման նախադրյալներին ու առանձնահատկություններին, մատնանշել է այդ առնչությամբ որոշ հիմնախնդիրներ: Նախադեպային որոշումների մի քանի օրինակների միջոցով հեղինակն ընդգծել է վերջիններիս մեկնաբանող դերը, օրենքի անորոշությունները հստակեցնող և բացերը լրացնող, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովող և հարակից այլ հարցեր պարզաբանող գործառույթները և մատնանշել նախադեպային իրավունքի պարբերաբար զարգացման գործընթացը:

Հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը հանգել է հետևյալ եզրակացությունների.

1. Չնայած մի շարք երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, դատական նախադեպը ձևական-իրավաբանական առումով չի ճանաչվում որպես մայրցամաքային գործող դրական իրավունքի աղբյուր, այնուամենայնիվ, դատական նախադեպերի ժողովածուների քանակը տարեցտարի ավելանում է Հայաստանում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Իտալիայում և շատ այլ երկրներում: Դա, անկասկած, հանդիսանում է ցուցանիշներից մեկը նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի ընդունման և գործնական նշանակության մասին: Հօգուտ վերջինիս են խոսում նաև այլ գործոններ, ինչպես օրինակ այն, որ մի շարք պետություններում (Գերմանիա, Իտալիա և այլն) սահմանադրական դատարանների որոշումներն ունեն պարտադիր բնույթ բոլոր ստորադաս դատարանների և պետական այլ մարմինների համար, չնայած նրան, որ դատական որոշումներն այդ պետություններում որպես իրավունքի աղբյուր ձևականորեն չեն ճանաչվում:

2. Դատական նախադեպը ձևականորեն և իրավաբանորեն ամրագրելու նպատակով՝ առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 171-րդ հոդվածի 2-րդ մասը փոփոխել հետևյալ կերպ՝ «Վճռաբեկ դատարանը նախադեպային որոշումներ կայացնելու միջոցով՝ 1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը. 2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:»:

3. Թեև իրավաբանության մեջ իրավաբանական դրականության (պոզիտիվիզմի) տեսության համաձայն՝ իրավունքը դիտարկվում է որպես օրենքների և ենթաօրենսդրական ակտերի համակցություն, այնուամենայնիվ, իրավունքը, որպես հասարակության մեջ որոշակի կարգուկանոնի

հաստատման և ապահովման միջոց, ավելի լայն, հարաշարժ հասկացություն է, որն իր մեջ ներառում է ոչ միայն օրենքները և ենթաօրենսդրական ակտերը, այլ նաև սովորույթները, դատական նախադեպերը, իրավական դիրքորոշումները, դատական պրակտիկան, իրավական ուսմունքները (դոկտրինները), հետևաբար, նշված իրավական համապատկերում դատական նախադեպն ունի իր ուրույն տեղը: Այն հանդիսանում է փոփոխվող հասարակական հարաբերությունների ընթացքում առաջացած վեճերի լուծման հիմնական եղանակներից մեկը: Այսինքն՝ նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի գործնական դերի օգտին է խոսում նաև այն, որ մայրցամաքային իրավունքի երկրների իրավաբանների մեջ ավելի շատ գերակշռում է այն կարծիքը, ըստ որի՝ իրավունքը բոլորովին էլ չի ստեղծվում միայն պետության կողմից ապրիորի ճանապարհով և չի բովանդակվում բացառապես օրենսդրական նորմերում: Իրավունքի որոնումը խնդիր է, որը պետք է լուծվի բոլոր իրավաբանների համատեղ ջանքերով, միասնաբար, յուրաքանչյուր իր ոլորտում, օգտագործելով բոլոր մեթոդները, ներառյալ դատարաններում պրակտիկ իրավաբանների գործունեության մեթոդները:

4. Նախադեպի ինստիտուտը կապված է բարձր իրավագիտակցության և իրավական մշակույթի հետ, ուստիև այն որոշակիորեն ազդում է նաև երկրի ընդհանուր և իրավական զարգացվածության վրա: Հետևաբար, յուրաքանչյուր երկրի և հատկապես ընդհանուր իրավունքի երկրների զարգացվածության աստիճանին նպաստել է նաև նախադեպային իրավունքը, քանի որ հենց նախադեպային իրավունքն է առավելագույն կերպով նպաստում իրավունքի զարգացմանը և երաշխավորում օրենքների միատեսակ կիրառությունը: Հատկանշական է նաև, որ նախադեպի ինստիտուտը զգալիորեն թեթևացնում է ստորադաս դատարանների գործունեությունը, որոնց իրավունք է վերապահված դատական գործերի քննությունն ավարտելով՝ վերջնական (գործն ըստ էության լուծող) դատական ակտ կայացնելիս, հղում կատարել նմանատիպ գործերով Վճռաբեկ դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումներին՝ դատական նախադեպերին: Այս հանգամանքը վկայում է նախադեպի ինստիտուտի դրական ազդեցության և փաստացի իրականությունում՝ դրա կարևորության մասին:

5. Իրավաբանական գրականության մեջ և դատական պրակտիկայում ընդունված է այն տեսակետը, որ դատական նախադեպը միայն բարձրագույն դատական մարմինների իրավակիրառ գործունեության ակտ է: Նշվածի հետևանքով ստեղծվում է մի իրավիճակ, որ կայացվում են մի շարք հակասական և, երբեմն, նույնիսկ իրարամերժ դատական որոշում-

ներ, դատական վճիռներ, դատավճիռներ: Միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար առաջնահերթ նշանակություն ունի յուրաքանչյուր դատական ատյանի դատական ակտերի միանմանությունը՝ նույնաման փաստական հանգամանքներ պարունակող գործերով, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ տվյալ ատյանի դատավորը պետք է կայացնի հնարավորինս ճշգրիտ և հիմնավոր դատական ակտ, որի պատճառաբանությունների ուսումնասիրությունից հետո կմերժվեն վեճի լուծման համար որևէ այլ ելքի առաջարկությունները:

6. Առաջարկում ենք՝ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում սահմանել այսպիսի իրավանորմ (կամ իրավադրույթ)՝ ՀՀ արդարադատության համակարգում յուրաքանչյուր դատավոր պարտավոր է հետևել վերադաս դատավորի որոշմանը, իսկ վերադաս դատավորները՝ իրենց նախկին որոշումներին, ինչպես նաև յուրաքանչյուր դատավոր պարտավոր է հաշվի առնել ինչպես իր նախկին՝ օրինական ուժի մեջ մտած որոշումները, այնպես էլ իր հետ միևնույն դատական ատյանի այլ դատավորների օրինական ուժ ստացած դատական որոշումները: Դատավորն իր հայեցողությամբ է որոշում քննվող և նախադեպային գործերի միջև փաստական հանգամանքների նույնամանության հարցը, նախադեպային որոշման կիրառման դեպքում վեր է լուծում և հետևություն անում նախադեպային որոշման մեջ կիրառված իրավական նորմերի, փաստերի, կատարված վերլուծությունների, ներկայացված պատճառաբանությունների, եզրահանգումների և գործի ելքի հարցերի շուրջ:

7. Առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի վերջում ավելացնել նաև 8-րդ կետ, ըստ որի՝ գործին մասնակցող անձանց, վկաներին, փորձագետին կամ մասնագետին հարցաքննելու, ապացույցը գտնվելու վայրում հետազոտելու կամ դատական հանձնարարություններ տալու անհրաժեշտության բացակայության դեպքում առաջին ատյանի դատարանն իրավունք ունի կիրառելու արագացված դատաքննություն, եթե՝ 8) գործին մասնակցող անձինք վկայակոչել են դատական նախադեպ (նախադեպեր) և դիմել են դատարանին այդ հիմքով արագացված դատաքննություն կիրառելու վերաբերյալ:

8. Ժամանակակից արևմտաեվրոպական երկրների իրավաստեղծ և իրավակիրառ փորձը վկայում է, որ հենց դատական նախադեպերի և դատական պրակտիկայի միջոցով են սկսվում հասարակական կյանքում ձևավորվել և գերիշխել ազատական գաղափարախոսության հիմնական, ելակետային սկզբունքներն ու դրույթները՝ մարդու իրավունքների առաջնայնությունը, դրական (պոզիտիվ) իրավունքում ազատության, ձևական-ի-

րավաբանական հավասարության և արդարության արժեքային հատկությունների առարկայական արտացոլումը և այլն:

9. Այն տեսակետի կապակցությամբ, որ դատական նախադեպի ինստիտուտը որոշակիորեն սահմանափակում է դատարանների ինքնուրույնությունը և դատավորի ազատ հայեցողության իրավունքը, հարկ է ընդգծել, որ դատական նախադեպը՝ որպես իրավակիրառ և իրավաստեղծ ակտ, հանդիսանում է դատական ազատ հայեցողության արդյունք և յուրաքանչյուր դատավոր՝ կիրառելով նախադեպային որոշումը, կարող է լրացուցիչ պատճառաբանություններ և հիմնավորումներ ներկայացնել և դրանով ավելի զարգացնել նախադեպում սահմանված իրավական դիրքորոշումը:

Հայաստանի Հանրապետությունում դատարանն իր հայեցողությամբ է կիրառում դատական նախադեպը և քննվող գործի որոշ առանձնահատկություններից ելնելով կարող է չկիրառել նախադեպային որոշումը կամ նախադեպերի հոժ գանգվածից ընտրել որևէ մեկը, որն ըստ իր հայեցողության առավել համապատասխան է իր վարույթում քննվող գործին, ինչը ևս վկայում է այն մասին, որ դատական նախադեպը չի սահմանափակում ինչպես դատարանների ինքնուրույնությունը, այնպես էլ դատավորի ազատ հայեցողության իրավունքը:

10. Իշխանությունների տարանջատման սկզբունքի վերլուծության համատեքստում կարելի է եզրահանգել, որ օրենսդիր իշխանությունն զբաղվում է օրինաստեղծ, իսկ գործադիր իշխանությունը՝ ենթաօրինաստեղծ գործունեությամբ, հետևաբար, այն պարագայում, որ երկու իշխանություններն զբաղվում են իրավաստեղծ գործունեությամբ, ապա դատական իշխանությանն իրավաստեղծ լիազորությամբ օժտելը, ինչը վերջինս կարող է իրականացնել նախադեպային որոշումների միջոցով, չի կարող հակասել իշխանությունների տարանջատման սկզբունքին, դա կնպաստի նաև հակակշիռների և զսպումների մեխանիզմի առավել արդյունավետ գործածությանը:

11. Դատական նախադեպն իր բնույթով հանդիսանում է դինամիկ երևույթ: Մշտապես փոփոխվող հասարակական կյանքին և հարաբերություններին համընթաց փոփոխվում են նաև դատական նախադեպերը: Մինչդեռ օրենքների կամ այլ նորմատիվ իրավական ակտերի և նախադեպերի համեմատության արդյունքում պետք է փաստել, որ նախադեպերն իրենց բնույթով ավելի դինամիկ երևույթ են, քան օրենքները կամ այլ նորմատիվ իրավական ակտերը: Նշվածը պայմանավորված է նրանով, որ վերջիններիս ընդունումը և դրանցում փոփոխություններ կամ լրացումներ

կատարելը պահանջում է երկարատև և բարդ գործընթաց, մինչդեռ նախադեպերը ձևավորվում են դատարանի կողմից որոշում կայացնելու հետևանքով, ինչը համեմատաբար ավելի կարճ ժամանակ է պահանջում:

Յուրաքանչյուր պետություն, զարգացնելով ներպետական իր իրավունքում նախադեպերի ծավալը, պետք է ուշադրություն դարձնի նաև միջազգային նախադեպային պրակտիկային, որն ունի զգալի ժառանգություն այս բնագավառում՝ խնդիրների ուրույն և առավել արդյունավետ լուծումներով հանդերձ: Այս կապակցությամբ հարկ է հստակեցնել, որ դատարանը՝ որոշում կայացնելիս, կարող է կիրառել ոչ միայն օտարերկրյա իրավունքը, այլև այդ երկրի նախադեպային որոշումները (իրավակիրառ պրակտիկան), ինչի հետևանքով գործը լուծել կիրառված նախադեպին համապատասխան: Նշվածը վերաբերում է տարբեր երկրների, այդ թվում՝ և՛ ընդհանուր իրավունքի երկրների, և՛ մայրցամաքային իրավունքի երկրների ներպետական իրավական համակարգի նախադեպային որոշումներին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

ա) Մենագրություն

1. Հակոբյան Ա., Դատական նախադեպի էությունը և առանձնահատկությունները. պատմատեսական և իրավակիրառական հիմնախնդիրներ, Եվրոպրինտ, Երևան, 2017, 120 էջ:

բ) Գիտական հոդվածներ

1. Հակոբյան Ա., Պրետորական իրավունքի նախադեպային բնույթի շուրջ // «Դատական իշխանություն» ամսագիր, 10-11/221-222, Երևան, 2017, էջ 3-9:

2. Հակոբյան Ա., Պրետորական իրավունքի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները // «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, 2018, № 103, էջ 48-52:

3. Հակոբյան Ա., Պրետորական էդիկտի նշանակությունը, առանձնահատկությունները իրավակարգավորումների ոլորտում // «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, 2018, № 104, էջ 56-60:

4. Հակոբյան Ա., Նախադեպային իրավունքը անգլոսաքսոնական իրավական համակարգում պատմաիրավական տեսանկյունից // «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, 2018, № 105, էջ 51-55:

5. Հակոբյան Ա., Նախադեպը ընդհանուր իրավունքի աղբյուրների համակարգում // «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթո-

դական հանդես, Երևան, 2018, № 106, էջ 42-48:

6. Հակոբյան Ա., Դատական նախադեպը իրավունքի տեսության տեսանկյունից // «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, 2018, № 107, էջ 57-62:

7. Հակոբյան Ա., Պրետորական էդիկտները որպես պրետորների իրավաստեղծ գործունեության արդյունք // «Արդարադատություն» ամսագիր, Երևան, 2018, № 3(44), էջ 29-33:

8. Հակոբյան Ա., Դատական նախադեպի մեկնաբանության մեթոդաբանական հիմնախնդիրները (Անգլիայի օրինակով) // «Արդարադատություն» ամսագիր, Երևան, 2018, № 4(45), էջ 18-22:

9. Хакобян. А., Основни историко-теоретични проблеми на източниците на правото // правното списание Норма, София, 2017, октомври, брой № 9, с. 5-12.

10. Хакобян. А., Понятие за източник на правото и съотношение между източник и форма на правото // правното списание Норма, София, 2017, ноември, брой № 10, с. 5-12.

АКОБЯН АННА АШОТОВНА

**СУДЕБНЫЙ ПРЕЦЕДЕНТ КАК ИСТОЧНИК ПРАВА: ИСТОРИКО-ТЕОРЕТИЧЕСКИЙ И ПРАВОВОЙ АНАЛИЗ
РЕЗЮМЕ**

Диссертация посвящена исследованию судебного прецедента - как источника права, и ее целью является наиболее полноценная характеристика судебного прецедента; исследование места и роли судебного прецедента - как источника права в механизме правового регулирования; представление содержания института прецедента; анализ сущности, значения, структуры и основных характеристик судебного прецедента; обоснование необходимости его широкого применения в национальной судебной системе и выявление других важнейших вопросов. Проведенное в данной диссертационной работе историко-правовое и теоретическое исследование направлено на еще большее развитие деятельности судебной власти в Республике Армения, уточнение и выделение роли высоких судебных инстанций в действующей правовой системе, расширение существующих понятий и областей применения касательно судебного прецедента, формирование, в результате изучения особенностей стран общего и континентального права, уравновешенной правовой системы, основанной одновременно - на прецедентном праве и других источниках права, предоставление решений таких основополагающих проблем, которые еще не были рассмотрены в теории права, а также представление ряда предложений, которые окажут существенное влияние на совершенствование законодательства Республики Армения, заполнение правовых пробелов и другие качественные изменения в национальной правовой системе.

Научная новизна исследовательской работы заключается в том, что впервые судебный прецедент изучен в контексте конституционных и законодательных изменений происшедших в Республике Армения. После внесения упомянутых изменений судебный прецедент рассмотрен в новых условиях, выявлены его сущность, место и роль во внутренней правовой системе, а также выяснена основополагающая задача становления судебного прецедента в Республике Армения. Более того, впервые в Республике Армения произведено беспрецедентное - углубленное и

тщательное историко-правовое научное исследование преторского права в древней римской правовой системе и формирование и развитие современной доктрины судебного прецедента в английской правовой системе. Одновременно, в диссертационной работе полностью раскрыты теоретические и практические аспекты прецедентного права. В результате этого проведен правовой сравнительный анализ современного прецедентного права правовых семей разных стран.

Теоретическая и практическая значимость диссертации состоит в том, что проведенные в Республике Армения законодательные реформы относительным образом соотносятся также с прецедентным правом, однако не были подвергнуты глубокому теоретическому изучению со стороны теории права. Сформулированные в данной диссертации теоретические положения и выводы позволяют выявить и решить ряд основополагающих проблем, что будет способствовать развитию общей теории государства и права, истории права и развитию отдельных разделов права. С этой точки зрения теоретическая значимость диссертации заключается в том, что предметом научного исследования является судебный прецедент, правовые основания для его применения, противоречия и пробелы касательно прецедента в законодательной системе и в судебной практике, разработан ряд научных предложений для их корректировки, которые имеют не только теоретическую, но и практическую и применительную значимость. Практическая значимость диссертации определяется тем, что ее результаты могут быть применены в ходе научно-исследовательской деятельности, в правотворческой и правоприменительной сферах, в судебной практике, на учебных курсах, лекциях и семинарах по теории и истории государства и права, и в некоторых отраслях юриспруденции, а также во время курсов по переподготовке и повышения квалификации соответствующих правоприменяющих органов. Данная диссертация также может быть полезна и практикующим юристам и ученым, и заинтересованным лицам - в последующих исследованиях, в связи с юридической и судебной деятельностью.

ANNA ASHOT HAKOBYAN

**JUDICIAL PRECEDENT AS SOURCE OF LAW:
HISTORICAL-THEORETICAL AND LEGAL ANALYSIS
SUMMARY**

The dissertation is devoted to the study of judicial precedent - as a source of law, and its purpose is the most comprehensive characterization of judicial precedent, the study of the place and role of judicial precedent - as a source of law in the legal regulation mechanism, presentation of the content of the institution of precedent, analysis of the nature, value, structure and main characteristics of the judicial precedent, the rationale for its widespread use in the national judicial system and the identification of other important issues. The historical-legal and theoretical research carried out in this dissertation is aimed at further developing the activities of the judiciary in the Republic of Armenia, clarifying and highlighting the role of high courts in the existing legal system, expanding the existing concepts and scopes of application for judicial precedent, forming, as a result of studying the features of common and continental law countries, a balanced legal system based simultaneously on precedent and other sources of law, providing solutions to such fundamental problems that have not yet been considered in the theory of law, as well as the presentation of a number of proposals that will have a significant impact on the improvement of the legislation of the Republic of Armenia, filling the legal gaps and other qualitative changes in the national legal system.

The scientific novelty of the research work is that for the first time a judicial precedent is studied in the context of constitutional and legislative changes that occurred in the Republic of Armenia. After these changes the judicial precedent is examined in the new conditions, its essence, place and role in the domestic legal system are revealed, and the fundamental task of establishing the judicial precedent in the Republic of Armenia is clarified. Moreover, for the first time in the Republic of Armenia, an unprecedented - an in-depth and thorough historical and legal scientific research is produced of the praetorian law in the ancient Roman legal system and the formation and development of the modern doctrine of judicial precedent in the English legal system. At the same time, in the dissertation the theoretical and practical

aspects of case law are fully disclosed. As a result of which, a legal comparative analysis of the modern case law of legal families from different countries is carried out.

The theoretical and practical significance of the dissertation is that the legislative reforms carried out in the Republic of Armenia are particularly correlated also with case law, however they have not been subjected to a deep theoretical study from the side of the theory of law. The theoretical provisions and conclusions formulated in this dissertation enable to identify and solve a number of fundamental problems, which will contribute to the development of a general theory of law and state, the history of law and individual sections of law. From this point of view, the theoretical significance of the dissertation lies in the fact that the subject of scientific research is the judicial precedent, the legal grounds for its application, contradictions and gaps regarding the precedent in the legislative system and in judicial practice, a number of scientific proposals have been developed for their adjustment, which have not only theoretical, but also practical and applicable significance. The practical significance of the dissertation is determined by the fact that its results can be applied during scientific and research activities, in law-making and law-enforcement spheres, in judicial practice, in training courses, lectures and seminars on the theory and history of law and state, and in some branches of jurisprudence, as well as during the courses on retraining and further training of the relevant law enforcement bodies. This dissertation can also be useful in subsequent scientific research of legal and judicial activities for practicing lawyers and scientists, as well as for interested persons.